



Ի գիտություն ՀՀ պետական համալսարանների 2015 - 2016 ուս. տարվա մագիստրատուրայի առաջին կուրսեցիների

Հայ օգնության ֆոնդը (ՀՕՖ) «Արմինե և Կարապետ Զամբակ կրթավճար» ծրագրի շրջանակներում Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների, տնտեսագիտության, սոցիոլոգիայի, կենսաբանության (միայն Էկոլոգիայի և բնության պահպանման մասնագիտացումը), ՀՀ պետական կառավարման ակադեմիայի քաղաքագիտության և Երևանի Վ.Բրյուսովի անվ. պետական լեզվաբանական համալսարանի հանրային կառավարման ֆակուլտետների մագիստրատուրայի առկա բաժնի առաջին կուրսի ուսանողների համար հայտարարում է մրցույթ, որի արդյունքում հաղթողներին կհատկացվի 4 կրթավճար: Հաղթողների ուսման վարձը (մասնակի կամ ամբողջությամբ) կվճարի ՀՕՖ-ը ամերիկահայ բարերարներ Արմինե և Կարապետ Զամբակների կողմից հատկացած միջոցներից:

Մրցույթին կարող են մասնակցել այն ուսանողները, ովքեր՝

- ունեցել են բարձր առաջադիմություն բակալավրի ծրագրով սովորելու տարիներին/լավ և գերազանց գնահատականներ/,
- ընդգրկված են հասարակական ու քաղաքացիական նախաձեռնություններում:

«Արմինե և Կարապետ Զամբակ կրթավճար» ծրագրի մրցույթին մասնակցելու կարգը.

Վերոնշյալ պայմաններին համապատասխանող ուսանողները ցանկության դեպքում կարող են մինչև 2015թ. սեպտեմբերի 1 -ը ներառյալ ք. Երևան, Մովսես Խորենացի 22 հասցեում գտնվող ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղ ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- ✓ դիմում (ձևը կարող եք վերցնել ՀՕՖ-ից և նշված ԲՈՒՀ-երի մագիստրատուրայի բաժնից),
- ✓ անձնագրի պատճեն,
- ✓ 1 լուսանկար (3x4 սմ չափսի),
- ✓ տեղեկանք ԲՈՒՀ-ից մագիստրատուրայի հավակնորդ լինելու մասին,
- ✓ բակալավրի աստիճանի դիպլոմի պատճեն ու դիպլոմի հավելվածի պատճեն,
- ✓ տեղեկանք ծնողների աշխատավայրից նրանց պաշտոնի և աշխատավարձի չափի վերաբերյալ, եթե չեն աշխատում՝ տեղեկանք զբաղվածության տարածքային կենտրոնից կամ աշխատանքային զբոսայգի պատճեն,
- ✓ նպատակի հիմնավորում՝ հակիրճ ներկայացնել Ձեր կենսագրությունը, Ձեր ունեցած հաջողությունները, ինչու եք ընտրել տվյալ մասնագիտությունը և ինչպես եք կիրառելու ստացված գիտելիքները ապագայում: Նշել նաև քաղաքացիական մասնակցության, գիտական աշխատանքներում ներգրավվածության մասին (1 համակարգչային էջի սահմաններում):

Ուշադրություն՝

Թերի փաթեթները չեն դիտարկվում, ներկայացված փաստաթղթերը հետ չեն վերադարձվում:

Ընտրությունը տեղի է ունենալու 3 փուլով.

1. Փաստաթղթային փաթեթի քննարկում
2. Հարցազրույց
3. Տնայց՝ անհրաժեշտության դեպքում

Սույն ծրագրում ուսանողի ընդգրկման վերջնական որոշումը կայացնելու է ՀՕՖ-ի կրթական ծրագրերի հանձնաժողովը, որից հետո ուսանողի և ՀՕՖ-ի միջև կկնքվի պայմանագիր:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ +347 60 52 66 60, կամ գրել հետևյալ էլ. հասցեներին՝ EKarapetyan@far.am , MKhachatryan@far.am :

Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մ/ճ

ՀՕՖ-ի «Արմինև և Կարապետ Զամբակ Կրթավճար» ծրագրի 2015 - 2016 ուս. տարվա Դիմում

Դիմորդի ազգանուն, անուն, հայրանունը _____
ինչպես անձնագրում

Անձնագրի սերիան և համարը _____ տրված _____ ում կողմից

Ծննդյան թվականը _____ ծննդավայրը _____
երկիր / քաղաք / գյուղ
 Քաղաքացիությունը _____

Գրանցման հասցեն՝ _____
քաղաք/գյուղ, փողոց, տուն/ բն.

Բնակության հասցեն _____
երկիր/մարզ քաղաք/գյուղ փոստային ինդեքս փողոց տուն/ բն.

Հ.Պ. (տան)՝ _____
մարզի կոդ

Հ.Ն. (բջջային)՝ _____

ԲՈՒՀ-ը, որտեղ սովորում է ուսանողը/անվանումը՝ _____

Ֆակուլտետը _____

Բաժինը _____

Ուսման վարձի մեկ տարվա գումարը՝ _____ ՀՀ դրամ

Բակալավրիատի առաջադիմության ՄՈԳ _____

Ծանոթացա ՀՕՖ-ի մրցութային կարգին և համաձայն եմ մրցութի պայմաններին: Խնդրում եմ ինձ ընդգրկել 2015-2016 ուս.տարվա «Արմինև և Կարապետ Զամբակ Կրթավճար» ծրագրի մրցութի մասնակիցների ցանկում:

- Դիմումին կից ներկայացնում եմ՝
- անձնագրի պատճեն,
 - 1 լուսանկար (3x4 սմ չափսի),
 - բակալավրի աստիճանի դիպլոմի և դիպլոմի հավելվածի պատճեն,
 - տեղեկանք ԲՈՒՀ-ից մագիստրատուրայի հավակնորդ լինելու մասին,
 - տեղեկանք ծնողների աշխատավայրից նրանց պաշտոնի և աշխատավարձի չափի վերաբերյալ (եթե չեն աշխատում՝ տեղեկանք զբաղվածության տարածքային կենտրոնից կամ աշխատանքային գրքույկի պատճենը)
 - նպատակի հիմնավորում (1 համակարգչային էջի սահմաններում հակիրճ ներկայացնել Ձեր կենսագրությունը, Ձեր ունեցած հաջողությունները, ինչու եք ընտրել տվյալ մասնագիտությունը և ինչպես եք կիրառելու ստացված գիտելիքները ապագայում, նշել նաև քաղաքացիական մասնակցության, գիտական աշխատանքներում ներգրավվածության մասին:)

Սույն ստորագրությունը վկայում է, որ վերոհիշյալ ողջ տեղեկատվությունը, ինչպես նաև ներկայացված փաստաթղթերը ճշգրիտ են:

Ուշադրություն՝
 Ներկայացրած փաստաթղթերը հետ չեն վերադարձվում:

Դիմորդի ստորագրությունը _____ Ամսաթիվ _____